ՄԵՆՈՒԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ 1992-94ԹԹ.

Մեծ Բրիտանիան իր նավթային շահերին հետամուտ իր մասնակցությունն է բերել ղարաբաղյան հակամարտության կարգավորման դժվարին գործընթացում: Ինչպես երևում է Մեծ Բրիտանիայի Արտաքին և համագործակցության գործերի նախարարության պաշտոնական հաղորդագրությունից, 20-րդ դարի վերջին տասնամյակի բրիտանական արտաքին քաղաքականության գլխավոր առաջնահերթությունը համարվել է հետսառըպատերազմյան Եվրոպայի վերակերտումն ու կայունության հաստատումը Եվրոպայում [1]: Քանի որ ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասի պետությունները հայտարարեցին Եվրոպայի մաս դառնալու իրենց անխախտ որոշման մասին և բռնեցին եվրահնտեգրման ուղին, ուստի Բրիտանիան պետք է որ շատ անելիքներ ունենար հակամարտություններով լի այս տարածաշրջանում: Թեև այս պետությունը երբեք չի հանդիսացել ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում միակ լիազոր միջազգային կառույցի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ, սակայն այն ազդել և շարունակում է ազդեցություն գործել կարգավորման գործընթացի վրա՝ առաջին հերթին տարածաշրջանում իր նավթային շահերի պաշտպանության պահանջից դրդված: Նշենք, որ Մեծ Բրիտանիայի նավթային ընկերությունները այսօր ծանրակշիռ դերակատարություն ունեն ադրբեջանական նավթի արդյունահանման և արտահանման գործում:

Բրիտանական նավթային ընկերությունները, և առաջին հերթին «Բրիթիշ Փեթրոլեումը», հսկայական դեր են խաղացել (և այսօր էլ խաղում են) Ադրբեջանի նավթի արդյունահանման և արտահանման ոլորտի զարգացման գործում: Մասնավորապես նշենք, որ ադրբեջանական «Ազերի», «Չըրաղ» և «Գյունեշլի» նավթահանքերի շահագործման նպատակով ձևավորված միջազգային ԱՄԳԸ - Ադրբեջանի միջազգային գործարկման կազմակերպություն (AIOC - Azerbaijan International Operating Company) կոնսորցիումում «Բրիթիշ Փեթրոլեումի» բաժնեմասն ամենամեծն էր՝ ավելի քան 17%, կոնսորցիումի մյուս ընկերությունների համեմատ (հետագայում այդ բաժնեմասը կրկնապատկվեց՝ հասնելով 34%-ի, այն բանից հետո, երբ «Բրիթիշ Փեթրոլիումը» ամերիկյան «Ամոկոյի» բաժնետոմսերի տեր դարձավ): Վերջինս նաև հայտնի Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի գործարկողն է:

Ադրբեջանական նավթի արդյունահանումն ու արտահանումը հավուր պատշաճի իրականացնելու խնդրում առաջնահերթ նշանակություն ունեն տարածաշրջանի խաղաղությունն ու ռազմաքաղաքական կայունությունը, ինչպես նաև տարածաշրջանի պետությունների ներքին կայունությունը: Այս հարցը մշտապես գտնվել է Ադրբեջանում նավթային հետաքրքրություններ ունեցող պետությունների կառավարությունների և քաղաքական շրջանակների ուշադրության կենտրոնում. նշված հարցի առնչությամբ կազմակերպվել են ամենատարբեր մակարդակի բազմաթիվ միջազգային քննարկումներ, որոնցից կարելի է առանձնացնել 1998թ. հունիսի 27-ից 28-ը Բաքվում կայացած Բերգեդորֆյան ֆորումի 113-րդ համաժողովը, որի մասնակից 16 պետությունների ներկայացուցիչների քննարկման կիզակետում էր հարավկովկասյան տարածաշրջանում կայունության և խաղաղության խնդիրը կասպիական նավթի և գազի արդյունահանման և արտահանման տեսանկյունից: Ինդուստրիալ երկրների՝ արդյունաբերության ոլորտում համագործակցության, ինչպես նաև այդ համագործակցությանը խոչընդոտող ամենատարբեր պրոբլեմների վերացման խնդիրներին նվիրված Բերգեդորֆյան ֆորումի 113-րդ համաժողովի բոլոր մասնակիցները (բրիտանական կողմը ներկայացնում էին «Մոնյումենթ Օյլ ընդ Գեզ» ընկերության գործադիր տնօրեն Թերի Ադամսը և Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտի ներկայացուցիչ Ռոյ Էլլիսոնը) իրենց ելույթներում շեշտում էին հարավկովկասյան կոնֆլիկտների կարգավորման և կառավարման հրամայականը՝ որպես կարևորագույն երաշխիք կասպյան շրջանում էներգետիկ բիզնեսի արդյունավետ իրականացման [2]: Ռոյ Էլլիսոնը այս առնչությամբ մասնակիցների ուշադրությունն էր հրավիրում ողջ Կովկասում (ներառյալ նաև Հյուսիսային Կովկասը) անվտանգության համալիր միջոցառումների իրականացման անհրաժեշտության վրա [2, էջ 71-72]: Ինչ վերաբերում է կոնկրետ ղարաբաղյան խնդրի կարգավորման շուրջ բրիտանական շահագրգռությանը, ապա պետք է նշել, որ խաղաղության հաստատման հարցը կենտրոնական է համարվել ինչպես ադրբեջանա-բրիտանական, այնպես էլ հայ-բրիտանական ամենաառաջին շփումներից սկսած: Այսպես, 1992թ. մարտին նորանկախ Հայաստանի արտաքին քաղաքական սկզբունքների, երկրի ներքին և արտաքին քաղաքական կարևոր հարցերի շուրջ աշխարհի հեղինակավոր որոշ երկրների ղեկավարություններին իրազեկելու նպատակով ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և Գերմանիա շրջագայած ՀՀ նախագահի քաղաքական վերլուծության գծով խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը հավաստում է, որ նշված պետությունների պաշտոնատար շրջանակների հետ հանդիպումներում գերիշխող են եղել Լեռնային Ղարաբաղում զինադադարի

հաստատման հնարավորության, խաղաղության համաժողովի հրավիրման, ինչպես նաև Հայաստան-Թուրքիա երկկողմ հարաբերությունների հարցերը [3]:

Ինչ վերաբերում է ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ խաղաղության և կայունության ապահովման հարցում Բրիտանիայի դերին և հնարավորություններին, ապա պետք է նկատել, որ Բրիտանիան, ունենալով քաղաքական և տնտեսական մեծ կշիռ աշխարհում և արտաքին ներդրումների առումով լինելով աշխարհի առաջատարներից մեկը, ունակ է լուրջ դերակատարում ունենալ այս հարցում՝ իր նպաստը բերելով հարավ-կովկասյան տարածաշրջանային համագործակցության հաստատմանը: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը 1999թ. մայիսի 10-11-ը Հայաստան այցելած Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի արտաքին հարցերի կոմիտեի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ հենց այս կերպ է նպատակահարմար համարել բրիտանական խաղաղարար ներգրավվածության հնարավորությունը [4]:

Այսպիսով կարելի փաստել, որ Մեծ Բրիտանիայի հարավ-կովկասյան քաղաքականության խնդիրների շարքում առանցքային դեր են խաղացել և շարունակում են խաղալ խաղաղության և կայունության կայացմանը նպաստելը:

Թե ինչ ազդեցություն է թողնում բրիտանական նավթային քաղաքականությունը ԼՂ հակամարտության շուրջ կայունության և խաղաղության ձեռքբերման վրա, կարելի է հիշատակել այն, որ Ադրբեջանի ղեկավարները թմբկահարում են նավթի վաճառքից ակնկալվող մեծ գումարների միջոցով Հայաստանին և Ղարաբաղին գերազանցելու և հիմնահարցը ռազմական ճանապարհով Ադրբեջանի օգտին լուծելու մասին: Հայաստանի պաշտոնական, հասարակական, քաղաքական և գիտական շրջաններում տարածված տեսակետ է, որ նավթի գործոնը բացասական դեր է խաղում արցախյան հակամարտության կարգավորման գործընթացում: Այս մասին բազմիցս է մտքերի փոխանակում տեղի ունեցել հայ-բրիտանական պաշտոնական շփումներում: Մասնավորապես Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության քաղաքական բաժանմունքի արևելյան հետազոտական խմբի ղեկավար Ջոնաթան Էյվսի հետ 1997թ. դեկտեմբերի 11-ին կայացած զրույցի ժամանակ ՀՀ ԱԳ փոխնախարար Արմեն Բայբուրդյանը, ներկայացնելով հարցի կարգավորման արտաքին դժվարությունները, նշել է, որ նավթի գործոնի ազդեցությամբ մեծ տերությունները ճնշում են գործադրում Հայաստանի իշխանությունների վրա. Ադրբեջանն էլ, մյուս կողմից, հույսեր է փայփայում, որ նավթի գործարքից ստացված եկամուտը հնարավորություն կտա ռազմական եղանակով լուծելու հարցը [5]: Նավթի գործոնի մասին խոսելիս անհնար է չհիշատակել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի գործոնը (որի գործարկող կազմակերպությունն է «Բրիթիշ Փեթրոլեումը»): Փաստորեն Հայաստանը շրջանցող տարածա-

շրջանային կոմունիկացիոն և էներգետիկ ծրագրերը, որոնցից մեկն էլ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի գործարկումն է, լրջորեն սպառնում են մեր երկրի ազգային անվտանգությանը [6]:

Քանի որ Մեծ Բրիտանիան մեր տարածաշրջանում միլիարդավոր դոլարների ներդրումներ է արել, հետևաբար այդ պետությունը հետևողական պետք է լինի և նույնպես ներդրում ունենա տարածաշրջանի կայունության և խաղաղության ձեռքբերման գործում: Այս առումով Մեծ Բրիտանիայի ցուցաբերած քաղաքական կամքն ու ակտիվ դիվանագիտական գործունեությունը հստակ դրսևորվել է 1992-94թթ:

Ռազմական գործողությունների դադարեցումը և խնդրի խաղաղ կարգավորումը միշտ գտնվել է հայ-բրիտանական և բրիտանա-ադրբեջանական երկկողմ պաշտոնական շփումների ընթացքում տեղի ունեցած տարաբնույթ քննարկումների կիզակետում: ԵԱՀԽ շրջանակներում Մինսկի Խմբի ստեղծման առաջարկը կայացրել է հենց Մեծ Բրիտանիան [7]: Վերջինս իր աջակցությունն է հայտնել դարաբաղյան կոնֆլիկտի տաք շրջանում ռազմական գործողությունների դադարեցմանն ուղղված ԵԱՀԽ ՄԽ կողմից կազմված ժամանակացույցերով նախատեսված քայլերի առնչությամբ: Ավելին՝ Մեծ Բրիտանիան ԼՂ կարգավորման հարցում շահագրգիռ արևմտյան այն եզակի պետությունն էր, որ ողջունում էր ռուսական խաղաղապահ զորքերի՝ դարաբաղյան և ադրբեջանական ուժերի բաժանարար գծում տեղակայելու ռուսական առաջարկը՝ ընդգծելով, որ ռուսական խաղաղապահ ուժերի՝ Ղարաբաղ մուտք գործելը ռազմական գործողությունների դադարեցման միակ ռեալ հնարավորությունն է: Այդ մասին 1993թ. հոկտեմբերին ՀՀ իշխանություններին պաշտոնապես հայտարարել է Մեծ Բրիտանիայի փոխարտգործնախարար Դուգլաս Հոգը [7]: Նույն հարցի շուրջ բրիտանական կողմի ցուցաբերած աջակցության մասին էր հավաստել նաև Մեծ Բրիտանիայի կառավարության հրավերով 1993թ. մայիսի 26-ից 29-ը Լոնդոնում գտնվող ՀՀ պատվիրակության կազմում ընդգրկված արտգործնախարար Վահան Փափազյանը: Շարադրելով ՀՀ տեսակետը Լեռնային Ղարաբաղում խաղաղության գործընթացի հետ կապված Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Թուրքիայի հանդես բերած եռակողմ նախաձեռնության առնչությամբ [8] (այս նախաձեռնությունն, ըստ Փափազյանի, թեև ողջունվում էր ՀՀ կողմից, սակայն այստեղ բացակայում էր խաղաղապահ ուժերի տեղակայման գաղափարը), բրիտանական պաշտոնական շրջանակների հետ մտքերի փոխանակման ժամանակ Վ. Փափազյանը մասնավորապես ասել է. «Հրադադարի երաշխիքներ ապահովելու համար հարկավոր կլինի տարածաշրջանում տեղաբաշխել խաղաղապահ ուժեր, որոնք օժտված կլինեն միջազգային մանդատով: 2,5–3 հազար թվակազմով այդ ուժերը կարող են

70-80 %-ով բաղկացած լինել Ռուսաստանի զորքերից»: Ըստ Փափազյանի, Բրիտանիան պաշտպանում էր թե եռակողմ նախածեռնությունը, թե ՀՀ տեսակետը խաղաղապահների տեղակայման առնչությամբ [8]:

Մեծ Բրիտանիան 1993թ. աշնանը փորձեց անդամակցել ԵԱՀԽ Մինսկի խմբին, ինչը սակայն չհաջողվեց մասնավորապես հայկական կողմի դիմակայության պատճառով [9]. (հայկական կողմի վերապահումներն այս հարցում ըստ երևույթին պայմանավորված էին այն հանգամանքի հետ, որ իբր Մեծ Բրիտանիան առանձնակի էր շեշտում հակամարտության կարգավորման գործում Ադրբեջանի տարածքային ամբողջականության կարևորությունը [10]): Այդուհանդերձ ասվածը վկայում է խնդրի խաղաղ կարգավորման և հատկապես ռազմական գործողությունների դադարեցման հարցում Մեծ Բրիտանիայի իրական շահագրգռության մասին: ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի նախկին դեսպան Բրայան Ֆոլը, Լևոն Տեր-Պետրոսյանի հետ ունեցած առանձնազրույցում հայտնել է, որ բրիտանացի դիվանագետները մեծ աշխատանք են տարել Ադրբեջանում պատերազմին կողմնակից ուժերին տարհամոզելու ուղղությամբ, ինչպես նաև որոշակի աշխատանքներ տարել Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը վերացնելու ուղղությամբ [5, էջ 126]: Լեռնային Ղարաբաղում խաղաղության հաստատման, հիմնախնդրի կարգավորման հարցում Բրիտանիայի՝ առավելագույնս օբյեկտիվ և ակտիվ ներգրավման, ինչպես նաև Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը վերացնելու պահանջով Բրիտանիայի կողմից այդ երկրների իշխանությունների վրա ճնշում գործադրելու հարցը քանիցս բարձրացվել է բրիտանական իշխանությունների շրջանում: Այս առնչությամբ զգալի աշխատանքներ է տարել մասնավորապես Բրիտանիայի խորհրդարանի բրիտանա-հայկական խորհրդարանական խումբը, որի անդամների թիվը արդեն 1993թ. աշնանը անցնում էր չորս տասնյակից [11]: Բրիտանա-հայկական խորհրդարանական խումբը մի քանի քննարկումներ է կազմակերպել Մեծ Բրիտանիայի պառլամենտի Լորդերի պալատում՝ նվիրված ղարաբաղյան հիմնահարցի տարբեր կողմերին և հիմնահարցի կապակցությամբ բրիտանական դիրքորոշմանը. այս ձեռնարկումներն իրենց դրական ազդեցությունն են թողել հիմնախնդրի շուրջ բրիտանական իշխանությունների՝ առավել օբյեկտիվ տեսակետի ձևավորման վրա: Հարկ ենք համարում առանձնացնել 1993թ. հոկտեմբերի 30-ի քննարկումը, որտեղ Լորդերի պալատի անդամներ Լորդ Շանոնը, բարոնուհի Քերոլայն Քոքսը և այլոք, Հայաստան և Լեռնային Ղարաբաղ կատարած իրենց այցելությունների արդյունքում ստացած տպավորությունների հիման վրա օբյեկտիվորեն իրազեկեցին բրիտանական կառավարությանն ու խորհրդարանականներին ղարաբաղյան խնդրի շուրջ շատ դեպքերի և հանգամանքների վերաբերյալ: Ընդգծելով ղարաբաղյան

հարցում Բրիտանիայի կառավարության կողմնակալ դիրքորոշման փաստը՝ նրանք պահանջեցին վերջինից ցուցաբերել ավելի հավասարակշռված մոտեցում: Խորհրդարանականները դատապարտեցին նաև Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի և Արցախի շրջափակման փաստը և կոչ արեցին իրենց կառավարությանը՝ օգտագործել իր ազդեցությունը Թուրքիայի հետ իր հարաբերություններում, որպեսզի վերջինս իր հերթին օժանդակի շրջափակման վերացմանը՝ բացելով իր սահմանները Հայաստանի հետ և ստիպելով Ադրբեջանին բացելու ցամաքային բոլոր ճանապարհները, որոնք կապում են Հայաստանը նաև այլ պետությունների հետ [12]:

Մեծ Բրիտանիան բավականին կառուցողական դիրքորոշում ուներ դարաբաղյան խնդրի կարգավորման հարցում՝ դրա լավագույն ձևաչափը համարելով ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակը [13]: Նշենք, որ 1993թ. վերջում բրիտանական կողմը զգուշությամբ, բայց միաժամանակ նկատելի աշխույժ քայլեր էր ձեռնարկել Մինսկի գործընթացի մեջ անմիջապես ներգրավվելու ուղղությամբ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Լոնդոնում բրիտանական կողմը զգալի դժգոհությամբ էր ընդունել հայկական կողմի վերապահումները: Այնուհետև բրիտանացիները հրաժարվեցին (համենայն դեպս արտաքուստ) այդ գաղափարից: Պետք է հաշվի առնել, սակայն, որ թեև բրիտանացիները բացակայում էին կարգավորման գործում անմիջական մասնակցության մեջ, այդուհանդերձ նրանց անուղղակի դերը՝ Մինսկի խմբի անդամ երկրների հետ մշտական խորհրդակցությունների, այլ կազմակերպությունների մակարդակում և այլն, Լոնդոնում ՀՀ դեսպանության հավաստմամբ, շարունակել է մնալ զգալիորեն աշխույժ [13]: Հետագայում մի քանի անգամ հանդես գալով որոշ նախաձեռնություններով՝ բրիտանական կողմը շեշտում էր, որ ցանկանում է իր ջանքերը համադրել Մինսկի խմբի գործողությունների հետ, այլ ոչ հակադրվել այդ կառույցին: Այսպես, 1999թ. ապրիլի 21-ին հանդիպելով ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչության պետ Զոհրաբ Մնացականյանի հետ՝ ՄԲ դեսպան Զոն Միտչիները ներկայացրել է մի հարց՝ այն ձևակերպելով որպես «Լոնդոնի պաշտոնական խնդրանքը՝ ոչ պաշտոնական եղանակով դիտարկելու տարածաշրջանում և մասնավորապես ԼՂ կարգավորման խնդրում Մեծ Բրիտանիայի դերի բարձրացման հարցը» [4, էջ 75]: Դեսպանը նշել է, որ այդ դերը կարող է դիտարկվել «Մեծ Բրիտանիա-Եվրոպական Միություն» համատեքստում, մասնավորապես հունիսի 22-ի Լյուքսեմբուրգի գագաթաժողովի շրջանակներում: Դեսպանը տեղեկացրել է, որ այդ հարցը շոշափվել է Գերմանիայի՝ որպես ԵՄ-ում նախա-

---

մինչ 1993թ. կեսերը Մեծ Բրիտանիան, ելնելով իր նավթային ընկերությունների՝ ադրբեջանական նավթահանքերում ամուր դիրքերի հաստատման շահերի հրամայականից, ԼՂ կարգավիճակի հարցում բացահայտ ադրբեջանամետ դիրքորոշում էր որդեգրել:

գահող երկրի հետ: Վերջինս ոգևորություն չի դրսևորել հարցի կապակցությամբ՝ առավել գերադասելի համարելով տարածաշրջանային համագործակցությանը նպաստող ծրագրերին աջակցելը: Պետք է նշել, որ հայկական կողմը պատրաստ չէր միանգամից գնահատելու կամ արձագանքելու այս առաջարկությանը [4, էջ 76]: Սակա էր տեղեկատվության որոշակի պակաս, թե ո՞րն էր բրիտանացիների այս առաջարկության պատճառը կամ նպատակը: Նման զարգացման մասին ենթադրություն անելու հիմքեր չեն եղել նաև ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի՝ Լոնդոն այցելության արդյունքում: Հավանական է համարվել, որ Մինսկի խմբում նկատված որոշակի «ճգնաժամը» և եռանախագահության աշխատանքներում հստակության բացակայությունը Մինսկի Խմբի ձևաչափը փոխելու գաղափարի շուրջ մտորումների տեղիք է տվել: Իսկ բրիտանական նախաձեռնության պատճառն ըստ երևույթին այն էր, որ 1998թ. Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի կառուցման մասին համաձայնագրի ստորագրմամբ, որի գործարկողն էր «Բրիթիշ Փեթրոլեումը», բրիտանացիների նավթային շահերի տեսանկյունից էլ ավելի էր հասունացել հակամարտության վերջնական կարգավորման հրամայականը: Ինչպես հայտնի է, այս առաջարկության քննարկումը այդպես էլ մնաց ոչ պաշտոնական հողի վրա, և հարցին հրապարակայնություն այդպես էլ չտրվեց:

Մեծ Բրիտանիան եռանդուն կերպով պաշտպանում էր ղարաբաղյան հակամարտության գոտում հատկապես ԵԱՀԿ խաղաղապահ ուժերի տեղակայման գաղափարը: Այս ուղղությամբ այն ակտիվ գործունեություն էր ծավալում հատկապես 1994թ. աշնանը, երբ նոր էր ստորագրվել ադրբեջանական նավթահանքերի շահագործման վերաբերյալ «Դարի գործարքը», որի իրականացումը վտանգված էր հոկտեմբերին Ադրբեջանում սկսված զինված խռովությունների պատճառով: Մեծ Բրիտանիան նաև ինքն էր պատրաստակամություն հայտնում 1994թ. աշնանը Լեռնային Ղարաբաղ խաղաղապահ ուժեր ուղարկելու հարցում: ԵԱՀԽ Նախնական գործողությունների ծրագրավորման խմբում (ՆԳԾԽ) Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Պատրիկ Օ՚Քոնելը Ավստրիայում ՀՀ դեսպանության աշխատակցին վստահեցրել է, որ իր կառավարությունը ղարաբաղյան խնդիրը պահում է իր ամենօրյա ուշադրության կենտրոնում և հստակ ու նախատեսվող գործողության առաջնայնությունը հիմնավորող փաստաթղթի ներկայացման դեպքում անկասկած կմասնակցի խաղաղապահպանությանը՝ տրամադրելով «աշխարհի լավագույն բանակներից մեկի գումարտակներից մեկը» [14]:

Ղարաբաղյան հարցում Բրիտանիայի խաղաղարար ջանքերի վերաբերյալ որոշակի կասկածներ հարուցող մի դեպք արժանի է լուսաբանման. 1994թ. փետրվարի 18-ին Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել

Գրաչովի նախաձեռնությամբ Հայաստանի, Ադրբեջանի պաշտպանության նախարարները և ԼՂՀ պաշտպանության բանակի ներկայացուցիչը Մոսկվայում ստորագրեցին արձանագրություն ռազմական գործողությունների դադարեցման և զորքերի որոշակի ետքաշման մասին [15]: Ըստ այդ արձանագրության, 1994թ. մարտի 1-ից սկսվող հրադադարով զորքերը ետ էին քաշվելու այնքան, որպեսզի բացառվեր նրանց միջև որևէ գործողություն, իսկ ձևավորվելիք անվտանգության գոտում տեղակայվելու էին դիտորդները [15, էջ 518]: Միևնույն ժամանակ նախապատրաստվում էր Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի պաշտոնական այցը Մեծ Բրիտանիա: Այդ այցի ժամանակ կնքվեցին բրիտանա-ադրբեջանական համագործակցության վերաբերյալ ութ համաձայնագրեր, իսկ որ ամենակարևորն է՝ «նավթի արդյունաբերության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը, որով փաստորեն ադրբեջանական նավթահանքերի շահագործման գործում առաջնահերթ իրավունքները վերապահվեցին «Բրիթիշ Փեթրոլեումին» [16]: Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում ելույթ ունենալիս Ալիևը շեշտել է, որ Ադրբեջանի ղեկավարությունը համաձայնել է համաձայնագիր կնքել «Բրիթիշ Փեթրոլեումի» հետ և այժմ հույս ունի ստանալու Բրիտանիայի աջակցությունը՝ միջազգային ասպարեզում Ադրբեջանի վարած քաղաքականության հարցում [15, էջ 519]: Հատկանշական է, որ Լոնդոնյան այցով սպառվեց Ալիևի իշխանության գալուստով սկսված մեղրամիսը ռուս-ադրբեջանական հարաբերություններում, և զգալի դարձավ Ադրբեջանի կողմնորոշումը դեպի արևմուտք: Եվ ինչպես տեսանք, հրադադարի վերաբերյալ մոսկովյան պայմանավորվածությունն այդպես էլ չկայացավ, ընդհակառակը, մարտի 1-ից ադրբեջանական կողմը նոր թափով վերսկսեց ռազմական գործողությունները: Այսուհանդերձ, ղարաբաղյան հակամարտությունում ռազմական գործողությունների վերաբերյալ Լոնդոնի դիրքորոշման ուսումնասիրությունը թույլ է տալիս հակվելու այն կարծիքին, որ Մեծ Բրիտանիան չէր կարող դրդել Ադրբեջանին՝ խախտելու մոսկովյան պայմանավորվածությունը հրադադարի կայացման վերաբերյալ. այդ քայլից ոչինչ չէր կարող շահել Լոնդոնը, ավելին՝ ռազմական գործողությունների վերսկսումը դանդաղեցնում էր նավթային գործարքների կայացման գործընթացը, որից, բնականաբար, առավելապես տուժում էր բրիտանական նավթային շահը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մեծ Բրիտանիայի ԱՀԳՆ պաշտոնական վեբկայք՝ www.fco.gov.uk/servlet/Front?pagename=OpenMarket/Xcelerate/ShowPage&c=Page&cid=1067967903739#Top
2. Энергетика и геостратегия в Каспийском регионе – участники, интересы, возможности конфликтов. 113-я конференция Бергедорфского форума, Баку, Азербаиджан, 1998 год // Международная жизнь, №4, 1999г., стр. 42-127
3. «Հայաստանի Հանրապետություն», 1992թ., 8-ը ապրիլի
4. ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ (այսուհետ՝ ՊԴԱ), ցուցակ 5, գործ 16, էջ 106
5. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 2, գործ 52, էջ 138
6. Այս մասին քանիցս նշվում է «ՀՀ Ազգային Անվտանգության ռազմավարության ուղենիշները» ՀՀ ԶՈՒ-ի հրամանատարական կազմի համար՝ ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի զեկույցում. Երևան, 16.02.2005թ.
7. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 1, գործ 173, էջ 192
8. «Հայաստանի հանրապետություն», 1993թ., 3-ը հունիսի
9. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 7, գործ 27, էջ 5
10. «Ղարաբաղյան հիմնախնդրին առնչվող մի քանի հարցերի վերաբերյալ որոշ երկրների դիրքորոշումները» ՀՀ ԱԳՆ Ղարաբաղի աշխատախմբի զեկույց, 10 հոկտեմբերի, 1993: Զեկույցը հասանելի է ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվում, ցուցակ 1, գործ 18, էջ 134-143
11. «Հայաստանի Հանրապետություն», 1993թ., 6-ը նոյեմբերի
12. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 2, գործ 54, էջ 3
13. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 2, գործ 51, էջ 153
14. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 1, գործ 19, էջ 149-150
15. В. Г. Митяев, "Карабахский конфликт в контексте международных отношений" // Армения и Россия: проблемы независимого развития. Российский институт стратегических исследований, Москва, 1998г., стр. 517-518
16. "Независимая Газета", 1994г., 2-е марта